ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԾՁԲ-18/9

ք. Երևան «26» մարտի 2018թ.

«Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն», ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Մ. Մակինյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Մ-Բի-Ռ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Բաղդասարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1.1 և N 1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1.1 և N 1 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1.1 և N 1 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1.1 և N 1 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1 082 500 (մեկ միլիոն ութսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1.1 և N 1 հավելվածներում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի

փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է __28__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ էԵԲՊՆ ջրային տնտեսության	Մ-Բի-Ռ ՍՊԸ
պետական կոմիտե	ՀՀ ք. Երևան, Մյասնիկյան 22/4
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա	<<Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ
ՖՆ աշխատակազմի	Հ/Հ 220083335012000
գործառնական վարչություն	ՀՎՀՀ 08417829
Հ/Հ 900011567378	հեռ. 055558550
ՀՎՀՀ 02555816	մնօրեն
Կոմիտեի աշխատակազմի ղեկավար	
Մ. ՄԱԿԻՆՅԱՆ	Վ. ԲԱՂԲԱՍԱՐՅԱՆ
(ստորագրություն) Կ. Տ.	(ստորագրություն) Կ. Տ.

Հավելված N 1
«26» մարտի 2018թ. կնքված
ՀՀԷԲՊՆԶՏՊԿ-ԳՀԾՁԲ-18/9 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը
1	50111130/1	1. Կարդալ ստորև 2.Համապատասխան Հավելված 1.1-ի	դրամ	1 082 500	1	Մյասնիկյան 22/4	մինչև 15.12.2018

1.Տեխնիկական բնութագիրը

Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման կայաններից պահանջվող տեխնիկական և կազմակերպչական պահանջներ
Տեխ. սպասարկման կայանը պետք է ունենա ստորև նշված նվազագույն հնարավորությունները որակով և ժամանակին տեխ. սպասարկում իրականացնելու համար

1. Տաքացվող բոքսեր ամբարձիչների վրա նշված ծառայությունների մատուցման հնարավորությամբ
2. Դիտափոս
3. Դողերի քանդման հավաքման և հավասարակշռման ստենդ
4. Անվաքացքի կարգավորման ստենդ
5. Ինժեկտորի լվացման և կարգավորման ստենդ
6. Մեղմիչների ստուգման ստենդ
7. Լուսարձակների կարգավորման ստենդ
8. Արգելակների ստուգման ստենդ
9. Ավտոէվակուատոր նվազագույնը 3.0 տ բեռնատարողությամբ, որը կանչը ստանալուց հետո 30 րոպեի ընթացքում կարող է դուրս գալ դեպի վթարի (խափանման) վայր ՀՀ տարածք
10. Կահավորված լինի անհրաժեշտ սարքավորումներով, ունենա ծրագրեր և տեխնիկական գրականություն նշված մակնիշի ավտոմեքենաների ախտորոշման համար:
11. Ունենա էլեկտրական բնույթի խափանումները վերացնելու հնարավորություն
12. Ունենա առնվազն 1 ավտոփականագործ, 1 շարժիչագործ, 1 ավտոէլեկտրիկ, ինժեկտորային մասնագետ, անվաքացքի ուղղման մասնագետ
13. Ախտորոշման/դիագնոստիկ սարք նշված ավտոմեքենաների ծրագրով
14. Կատարի շարժիչի և նրա համակարգերի, ուժային և ղեկավարման համակարգերի ընթացային մասի և թափքի ինչպես ընթացիկ այնպես էլ կապիտալ վերանորոգման աշխատանքներ
15. Պահեստամասերը պետք է լինեն նոր և չօգտագործված

Նշված պահանջներից որևէ մեկին չհամապատասխանելու դեպքում հայտը կարող է մերժվել
Ծանոթություն՝ վերը նշվածն անհրաժեշտության դեպքում ենթակա է տեղում ստուգման մրցույթն ավարտվելուց հետո, հայտ ներկայացրած իրավաբանական անձի ներկայացուցչի հետ
Երաշխիքներ
Ծառայությունների համար-6 ամիս
Պահեստամասերի համար-12 ամիս
Ռետինե դետալների համար-6 ամիս
Իրականացվելիք նորոգումների և տեխնիկական սպասարկումների ընթացակարգի համառոտ նկարագիրը

1. Ավտոմեքենայի անհրաժեշտ նորոգման և տեխնիկական սպասարկման համար Կատարողը պարտավոր է պատվիրատուի նշված ժամկետում և պահանջով ընդունել ավտոմեքենան ՏՍ կայան և

անմիջապես իրականացնել ախտորոշման, անհրաժեշտ քանդման, ապամոնտաժման, զննման և գնահատման աշխատանքներ:

2. Յուրաքանչյուր ավտոմեքենայի սպասարկման և նորոգման համար պատվիրատուի պահանջով կատարողի կողմից կազմվում, կնքվում և պատվիրատուին է ներկայացվում նախնական զննման և գնահատման ակտ:

3. Ծառայությունները պետք է մատուցվեն տրանսպորտային միջոցը տեխսպասարկման կայանում գրանցելու օրվանից՝ մեկ օրացուցային օրվա ընթացքում, եթե փոխհամաձայնությամբ ավելի երկար ժամկետ սահմանված չէ: Տեխսպասարկման կայանում տրանսպորտային միջոցի տեխնիկական սպասարկումը պետք է իրականացվի արտահեր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ էԵԲՊՆ ջրային տնտեսության
պետական կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011567378
ՀԿՀՀ 02555816
Կոմիտեի աշխատակազմի ղեկավար

_____ Մ. ՄԱԿԻՆՅԱՆ
(ստորագրություն) Կ. Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Մ-Բի-Ռ ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Մյասնիկյան 22/4
<<Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 220083335012000
ՀԿՀՀ 08417829
հեռ. 055558550
տնօրեն

_____ Ա. ԲԱՂԲԱՍԱՐՅԱՆ
(ստորագրություն) Կ. Տ.

Հավելված 1.1

«26» մարտի 2018թ. կնքված

ՀՀԷԲՊՆԶՏՊԿ-ԳՀԾՁԲ-18/9 ծածկագրով պայմանագրի

h/h	SU-1 (տեխնիկական զննման/դիագնոստիկա) SU-2 (վերանորոգման) ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Տրանսպորտային միջոցների մակնիշները (տեսակները)		
		Հյունդայի – Տուքսոն 2013թ..	Հյունդայի Սանտաֆե 2008թ.	Կիա Սպորտէյջ 2012
1	2	ՀՀ դրամ		
	Նույնականացման համարը	KMHJT81EDEU808940	KMHSH81DP9U428904	KNAPB811CD7382969
	SU-1 ներառվող ծառայությունների անվանումները	Հյունդայի – Տուքսոն 2013թ..	Հյունդայի Սանտաֆե 2008թ.	Կիա Սպորտէյջ 2012
1	Բռնկման համակարգի ստուգում	10	10	10
2	Կցորդման համակարգի ստուգում	10	10	10
3	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	10	10	10
4	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	10	10	10
5	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	10	10	10
	SU-2 ներառվող ծառայությունների անվանումները	Հյունդայի – Տուքսոն 2013թ..	Հյունդայի Սանտաֆե 2008թ.	Կիա Սպորտէյջ 2012
	1.Շարժիչ			
6	Շարժիչի հանում և տեղադրում	30,000	30,000	30,000
7	Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	80,000	80,000	80,000
8	Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով	25,000	25,000	25,000
9	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով	10	10	10
10	Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով և խտաբուկերով 1 կ-տ	2,000	2,000	2,000
11	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	10	10	10

12	Շարժիչի փականների զսպանակների փոխարինում	10	10	10
13	Փականների խցուկների փոխարինում 1 կ-տ	15,000	15,000	15,000
14	Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում 1 կ-տ	10	10	10
15	Շարժիչի մխոցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	25,000	25,000	25,000
16	Ծնկաձև լիսեռի հղկում	8,000	8,000	8,000
17	Ծնկաձև լիսեռի հանում տեղադրում կամ փոխարինում	1,000	1,000	1,000
18	Ծնկաձև լիսեռի ներդրակների փոխարինում 1 կ-տ	10,000	10,000	10,000
19	Ծնկաձև լիսեռի ատամնանիվի փոխարինում	10	10	10
20	Ծնկաձև լիսեռի ուղղում	10	10	10
21	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	8,000	8,000	8,000
22	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	3,000	3,000	3,000
23	Շարժիչի բլոկի փոխարինում	1,000	1,000	1,000
24	Շարժիչի գլանի փոխարինում (гилзовка)	10	10	10
25	Մխոցի փոխարինում 1 հատ	2,000	2,000	2,000
26	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	10	10	10
27	Բաշխիչ լիսեռի ականոցների հանում և տեղադրում կամ փոխարինում	10	10	10
28	Փոկանիվի փոխարինում	10	10	10
29	Շարժիչի ատամնավոր փոկի փոխարինում	25,000	25,000	25,000
30	Շարժիչի շղթայի փոխարինում	10	10	10
31	Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում)	10	10	10
32	Շարժիչի քարտերի փոխարինում, միջադիրի փոխարինումով	3,000	3,000	3,000
33	Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում	2,000	2,000	2,000
34	Շարժիչի յուղի մղիչի փոխարինում	10	10	10
35	Շարժիչի յուղի մղիչի նորոգում, մաքրում	5,000	5,000	5,000
36	Յուղի ծորակի փոխարինում	10	10	10
37	Օդաքաշակ փողրակի փոխարինում	10	10	10
38	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	2,000	2,000	2,000
39	Շարժիչի կափարիչի միջադիրի փոխարինում	2,000	2,000	2,000
40	Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	10	10	10
41	Շարժիչի կափույրի փոխարինում	10	10	10

42	Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում	10	10	10
43	Շարժիչի շարժաթևի փոխարինում 1 հատ	3,000	3,000	3,000
44	Մխոցային օղակների փոխարինում 1 կ-տ	10	10	10
45	Շարժիչի բաշխիչ լիսեռի երիթակի փոխարինում	10	10	10
46	Ատամնանիվի փոխարինում	10	10	10
47	Ատամնանիվի փոկի փոխարինում	10	10	10
48	Սուխարիկ փոխարինում 1կ/տ	10	10	10
49	Շարժիչի հանդարտիչի փոխարինում	10	10	10
50	Շարժիչի փոկի հոլովակի փոխարինում	10	10	10
51	Շարժիչի հոլովակի առանցքակալի փոխարինում	10	10	10
52	Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով	5,000	5,000	5,000
53	Շարժիչի յուղի արանքաչափիչի (Քցտ) իրանի փոխարինում	10	10	10
54	Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում	5,000	5,000	5,000
55	Շարժիչի փոկի ձգիչի նորոգում	10	10	10
56	Շարժիչի գամասեղի փոխարինում	10	10	10
57	Գլխիկի հեղույսի փոխարինում	10	10	10
58	Ծնկաձև լիսեռի հեղույսի փոխարինում	10	10	10
59	Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում	1,000	1,000	1,000
60	Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում	1,000	1,000	1,000
2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ				
61	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	2,000	2,000	2,000
62	Ավտոմեքենայի յուղում	1,000	1,000	1,000
63	Համակարգչային ախտորոշում, թերությունների վերացմամբ	5,000	5,000	5,000
64	Յուղի ռադիատորի փոխարինում	10	10	10
65	Յուղի ռադիատորի նորոգում	10	10	10
66	Շարժիչի կոլեկտորի միջադիրի փոխարինում	1,000	1,000	1,000
67	Վառոցքի մոմի փոխարինում 1 կ-տ	6,000	6,000	6,000
68	Վառելիքի նուրբ մաքրման զտիչի փոխարինում	6,000	6,000	6,000
69	Օդի զտիչի փոխարինում	500	500	500
70	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	3,000	3,000	3,000

71	Օդի զտիչի փողրակի հանում և տեղադրում	1,000	1,000	1,000
72	Ինժեկտորի բոցամուղերի մաքրում	15,000	15,000	15,000
73	Բոցամուղի կոդավորում	1,000	1,000	1,000
74	Ինժեկտորի բոցամուղի խտաբուկերի փոխարինում	1,000	1,000	1,000
75	Բենզամղիչի փոխարինում	8,000	8,000	8,000
76	Վառելիքի կոշտ մաքրման զտիչի փոխարինում	10	10	10
77	Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	1,500	1,500	1,500
78	Բռնկման կարգավորում	1,000	1,000	1,000
79	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	3,000	3,000	3,000
80	Ղեկավարման բլոկի վերանորոգում	4,000	4,000	4,000
81	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	10	10	10
82	Վառելիքի բաքի մաքրում	10	10	10
83	Օդի ծախսի տվիչի փոխարինում	10	10	10
84	Տրամլյորի հանում և տեղադրում կամ փոխարինում	10	10	10
85	Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում	10	10	10
86	Ջրի խողովակի, փողրակի փոխարինում	1,000	1,000	1,000
87	Բենզոբաքի բենզոմղիչի ցանցի փոխարինում	1,000	1,000	1,000
88	Բենզոբաքի բենզոմղիչի ցանցի մաքրում	10	10	10
89	Յուղի ճնշման տվիչի փոխարինում	1,000	1,000	1,000
3. Սառեցման և արտածման համակարգ				
90	Հովհարի փոխարինում	3,000	3,000	3,000
91	Հովհարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	10	10	10
92	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	5,000	5,000	5,000
93	Ռադիատորի նորոգում	40,000	40,000	40,000
94	Շերտափեղկի փոխարինում	10	10	10
95	Շերտափեղկի կառավարման ձգաձողի փոխարինում	10	10	10
96	Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում	2,000	2,000	2,000
97	Ջրի ծորակի փոխարինում	10	10	10
98	Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում	2,000	2,000	2,000
99	Հովհարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	1,000	1,000	1,000

100	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված	25,000	25,000	25,000
101	Վառարանի շարժիչի փոխարինում	4,000	4,000	4,000
102	Թերմոստատի փոխարինում	3,000	3,000	3,000
103	Ջրի մղիչի փոխարինում միջադիրով	12,000	12,000	12,000
104	Ջրի մղիչի միջադիրի փոխարինում	10	10	10
105	Գեներատորի փոկի փոխարինում	5,000	5,000	5,000
106	Գեներատորի փոկի ձգող հոլովակի փոխարինում	1,000	1,000	1,000
107	Ջրի ռադիատորի վերանորոգում	10	10	10
108	Թերմոստատի միջադիրի փոխարինում	10	10	10
109	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	1,000	1,000	1,000
110	Խլարարի 1 հատ խողովակի փոխարինում	1,000	1,000	1,000
111	Խլարարի ներդիրի փոխարինում	1,000	1,000	1,000
112	Խլարարի կախոցի փոխարինում	1,000	1,000	1,000
113	Հովացման հեղուկի փոխարինում	2,000	2,000	2,000
	4. Կցորդում և ՓՏ			
114	ՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	190,000	190,000	190,000
115	ՓՏ-ի հավաքածույի փոխարինում	10	10	10
116	ՓՏ-ի առջևի խտաբուկի փոխարինում	10	10	10
117	ՓՏ-ի հետևի խտաբուկի փոխարինում	10	10	10
118	ՓՏ-ի հանում և տեղադրում	10	10	10
119	ՓՏ-ի քանդում,արատավորում, հավաքում	10	10	10
120	ՓՏ-ի պատյանի փոխարինում	10	10	10
121	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	10	10	10
122	ՓՏ-ի միջանկյալ լիսեռի փոխարինում	10	10	10
123	ՓՏ-ի ատամնանիվի փոխարինում	10	10	10
124	ՓՏ-ի առաջնային լիսեռի փոխարինում	10	10	10
125	ՓՏ-ի երկրորդային լիսեռի փոխարինում	10	10	10
126	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի փոխարինում	10	10	10
127	ՓՏ-ի բարձիկի փոխարինում	10	10	10
128	ՓՏ-ի փոխանցման լծակի փոխարինում	10	10	10

129	ՓՏ-ի յուղի փոխարինում	10	10	10
130	Վազքաչափի շարժաբերի փոխարինում	10	10	10
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ			
131	Բաշխիչ տուփի հիմնական նորոգում,	1,000	1,000	1,000
132	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում կամ փոխարինում	1,000	1,000	1,000
133	Բաշխիչ տուփի քանդում և արատավորում,հավաքում	500	500	500
134	Բաշխիչ տուփի բարձր փոխանցման մեխանիզմի փոխարինում	1,000	1,000	1,000
135	Բաշխիչ տուփի ցածր փոխանցման մեխանիզմի փոխարինում	500	500	500
136	Բաշխիչ տուփի դիաֆրագմաների փոխարինում	1,000	1,000	1,000
137	Բաշխիչ տուփի դիֆերենցիալի փոխարինում	1,000	1,000	1,000
138	Բաշխիչ տուփի միջակա լիսեռի փոխարինում	500	500	500
139	Բաշխիչ տուփի առաջնային լիսեռի փոխարինում	1,000	1,000	1,000
140	Բաշխիչ տուփի երկժանիի փոխարինում	1,000	1,000	1,000
141	Բաշխիչ տուփի բարձիկի փոխարինում	1,000	1,000	1,000
142	Բաշխիչ տուփի խտաբուկի փոխարինում	500	500	500
143	Բաշխիչ տուփի առանցքակալի փոխարինում	1,000	1,000	1,000
144	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	500	500	500
145	Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում	1,000	1,000	1,000
146	Բաշխիչ տուփի կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում	500	500	500
147	Տվիչի փոխարինում	1,000	1,000	1,000
148	Բաշխիչ լիսեռի ատամնանիվի փոխարինում	1,000	1,000	1,000
149	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում կամ փոխարինում	500	500	500
	6. Առջևի և հետևի կամրջակներ			
150	Առջևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	1,000	1,000	1,000
151	Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման (ռեդուկտոր) քանդում, արատավորում և հավաքում	500	500	500
152	Առջևի կամրջակի կիսասռնու հանում և տեղադրում կամ փոխարինում	1,000	1,000	1,000
153	Կամրջակի յուղի փոխարինում	1,000	1,000	1,000
154	Առջևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	1,000	1,000	1,000

155	Առջևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	1,000	1,000	1,000
156	Հետևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	500	500	500
157	Հետևի կամրջակի կիսաառնու հանում և տեղադրում կամ փոխարինում	1,000	1,000	1,000
158	Հետևի կամրջակի կիսաառնու առանցքակալի փոխարինում	1,000	1,000	1,000
159	Հետևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	500	500	500
160	Հետևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	1,000	1,000	1,000
161	Հետևի կամրջակի բլոկավորման համակարգի նորոգում	500	500	500
162	Կամրջակի տվիչի փոխարինում	500	500	500
	7. Կախոց			
163	Տրավերսի հանում և տեղադրում կամ փոխարինում	5,000	5,000	5,000
164	Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում կամ փոխարինում	5,000	5,000	5,000
165	Առջևի անվակունդի առանցքակալի փոխարինում	5,000	5,000	5,000
166	Առջևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	5,000	5,000	5,000
167	Հետևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	5,000	5,000	5,000
168	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	5,000	5,000	5,000
169	Անվակունդի գամասեղի և հեղույսի փոխարինում(մեկ անիվի համար)	3,000	3,000	3,000
170	Ձախ կամ աջ հոդակապի խտաբուկերի փոխարինում	5,000	5,000	5,000
171	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	5,000	5,000	5,000
172	Առջևի զսպանակի փոխարինում	1,000	1,000	1,000
173	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	6,000	6,000	6,000
174	Հարվածամեղմիչի վռանների փոխարինում	10	10	10
175	Ներքևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	4,000	4,000	4,000
176	Ներքևի լծակի վռանների փոխարինում 1 հատ	3,000	3,000	3,000
177	Ներքևի լծակի հեղույսի փոխարինում	1,000	1,000	1,000
178	Հարվածիչի (բարձիկի փոխարինում)	10	10	10
179	Գնդե հոդակապերի պատյանի փոխարինում	10	10	10
180	Գնդե հոդակապերի փոխարինում	5,000	5,000	5,000
181	կայունարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	2,000	2,000	2,000
182	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	4,000	4,000	4,000
183	Հետևի կախոցի անվաբացքի կարգավորում	5,000	5,000	5,000